

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 30 ՍԵՊՏ., 1930

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԱԳՐԱԿԱՆ

ԹԻՍՈՒՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՍՈՐՎԵՑՆԵԼ

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԵԼԵԻՄՈՒՏՔԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ՏԻԿ. Վ. ՊԷԿԵԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ՄԱՆԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՎՏԱՆԿՆԵՐԸ

ԹԱՐԳՄ. Ս. Յ. Վ.

ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉՈՐԻ ՊԷՏՔ Է ՈՅԺ ՆԱԼ ԱՐԱՔԵՐԷՆԻ

Տ. Ճ. Խ.

ՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՍՈՐՎԵՑՆԵՆՔ

ԱՄԱՎԵՐՋԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

ԿԵՆՍԱՄԻՆԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՐԳՄ. ՏՈԳ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

ԿԵՆՍԱՄԻՆ (VITAMIN)Ի ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շատ «ՆՈՐ ԲԱՆԵՐ» չկան այս օրեր, նոր կը թուին մեզի որովհետև մենք անպիտակից ենք անոնց հանդէպ: Յուշի-ոս կեսար ամէն շնչառութեան միջոցին թթուածին առաւ թոքերուն մէջ, իսկ Մեծն Աղեքսանդր կենսամիներով սը-նուցուեցաւ: Մենք ամէնքս կ'ուտենք, կը խմենք, կը շնչենք սովորական բա-նէր որոնք անհրաժեշտ են մեր կենսու-նակութեան համար, առանց գիտնալու անոնց գործունէութեան և վիճակի մա-սին: Այսպէս է կենսամիներու խըն-դիւրը — շատ պարզ բաներ իսկութեան մէջ, բայց հազիւ մի քանի տարուան մէջ ծանօթացաւ աշխարհ անոնց: Ո-մանց մասին ամփոփ կերպով կրնանք տեղեկանալ:

Կենսամին կը կոչուին այն նիւթերը որոնք աւելի կամ նուազ քանակու-թեամբ կը գտնուին մեր սննդեղէններուն մէջ: Դեռ անոնք մեկուսացուած չեն, բացարձակ զուտ վիճակի մէջ, չեն կրնար գասաւորուիլ անոնք պարզ նիւթերու տեսակներուն: Բոլոր կենսամիները գրեթէ շուտով կ'արուին եռացած ջու-րի մէջ, նա մանաւանդ երբ օդ և թթ-ուածին գտնուի:

Դրեթէ եօթը տեսակ կենսամիներու ծանօթացած է աշխարհը, ասոնց ներ-կայութիւնը մեր սննդեղէններու մէջ անհրաժեշտ է, սննդարար կերակուր կոչուելու համար: Անոնց անունը և գործունէութիւնը կարգ մը սննդեղեն-ներու մէջ այսպէս կը կոչուին:

1. Կենսամին Ա.— Կ'առաջացնէ ա-ճումը, կը պահէ մարմինը լաւ վիճակի մէջ, մէկ խօքով արգելք կը հանդիսա-նայ ընդհանուր ախտերու դէմ: Մաս-նաւորաբար կը գտնուի կաթի, կարա-զի, հաւկիթի եւ կանաչ տերեւներով բանջարեղէններու մէջ:

2. Կենսամին Բ.— Այս կենսամինը

վերջերս երկու մասերու բաժնուած է, գիտցուած են **Բ** և **Զ** անուններով, թէ-պէտ երկուքին միացումին կը տրուի **Բ**, կենսամին անունը: Կը գտնուի թարմ բանջարեղէններու, մակարդի (Yeast) և արմտիքի մէջ:

3. Կենսամին Ը.— Կ'արգիլէ ընդա-գարութիւնը (Scurvy). կը գտնուի լուլիկի (թոմաթէս) նարինջի և լեմոնի մէջ:

4. Կենսամին Դ.— Կ'արգիլէ ոսկրա-թեքութիւնը, կը գտնուի ձկանիւղի և կարգ մը կանաչեղէններու մէջ:

5. Կենսամին Ե.— Անհրաժեշտ է նո-րածին կենդանիներու վերարտադրու-եան, կը գտնուի ցորենի զիլի և հա-զարի մէջ:

6. Կենսամին Բ.— Այս կենսամինի պակասը յառաջ կը բերէ ախտոժակի պակաս, ջղայնութիւն, պրկում ջղոց և անդամալուծութիւն:

7. Կենսամին Գ.— Կ'արգիլէ մորթախտ (pellegra) կոչուած հիւանդութիւնը:

Վերը յիշուած բոլոր կենսամիները կը գտնուին կաթին եւ կանաչեղէննե-րու մէջ, նամանաւանդ հազարի եւ սպանախի մէջ: Թէ ինչպէս կ'ըլլայ որ այս կենսամիները կ'արգիլեն ախ-տերը, եւ կը քաջալերեն աճումը դեռ մեզի անծանօթ է:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՍՈՒՐԻՍՅԷՆ այս տարի կարգաւոր-համար Աթէնքի Սփուլալ Րիլինդընը գացող աւսանողներն են Տիարք. Կ. Թիւթիեան, Եօղլունօլուպլի, Սենեքէրիմ Սիւլահեան, Այնթապլի, Յովհաննէս Սարգիսեան, Բէսապլի: Նոյն դպրոցի մէջ Սուրիայէն գացած անցեալ տարուայ աշակերտներն են. Տիարք Զաքարիաճեան, Մ. Բէօրօղ-լուեան և Օր. Լէպլիպէ Շէմաս:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 30 ՍԵՊՏ., 1930

թիի 17

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՍՈՐՎԵՑՆԵԼ

Մեր դպրոցներուն մէջ պէտք է սորվեցնենք կրօնքը. անկասկած: Աշակերտներուն պէտք է սորվեցնենք մեր կրօնքին ուսուցած պարտականութիւնները. անպատճառ: Բայց ինչո՞ւ այս հարցումները կ'ընենք: Եթէ ասոնց պատասխանը դրական է, հարցում մ'ալ ընենք: Մեր դպրոցներուն մէջ պէտք է սորվեցնենք Յիսուսի սորվեցուցած բարոյական և ընկերային սկզբունքները: Դպրոցին մէջ ինչ որ կը սորվեցուի — զոր օր. ֆրանսերէն, թուարանութիւն, գեղագրութիւն—ետքը կ'հանքի մէջ գործածուելու համար կը սորվեցուի: Եթէ Յիսուսի սկզբունքները կը սորվեցնենք նոյն գործնական արդիւնքը պէտք է ակնկալենք: Տղաները դպրոցը ձգելէ ետքը այս ուսուցումները պէտք է կիրարկեն, առևտուրի և հանրային կեանքին մէջ պէտք է զանոնք գործածեն: Մենք կը փափաքի՞նք այս:

Ահա մարդ մը որ առևտրական մեծ գործ մ'ունի, զոր մի քանի տարուան միջոցին իր զաւակին պիտի թողու: Անիկայ կ'ուզէ՞ խորհիլ որ իր զաւակը ապագային Յիսուսի սկզբունքներուն պիտի համաձայնեցնէ իր գործին մեթոտները: Ի՞նչ կը խորհիլ ցած օրավարձը տալու, ապրանքին թերութիւնները ծածկելու, տարբեր մարգերու տարբեր գիներով ծախելու և չափազանց բարձր գիներու մասին, զանոնք դիտելով Յիսուսի սկզբունքներուն լոյսին տակ:

Հանրային գործերու ղեկը շատ չանցած ներկայ առաջնորդներէն ուրիշներուն պիտի փոխանցուի: Անոնք կ'ուզեն խորհիլ թէ իրենց յաջորդները քաղաքական և ազգային գործերու մէջ Յիսուսի գաղափարները պիտի գործածեն: Անոնք Յիսուսի սկզբունքներուն լոյսին տակ ի՞նչ կը խորհին պատերազմի, առևտութեան, ուրիշ ազգերէն մեկուսացու մի մասին:

Մենք կը փափաքի՞նք որ մեր զաւակները Յիսուսի տուած լոյսը իրապէս սորվին և անոր համեմատ ապրին: Մենք սիրո՞վ կ'ողջունենք գիտական ոեւէ ճիւղին մէջ ոեւէ նոր լոյս մը, զոր անմիջապէս կ'ուզենք գործածել եւ անկէ օգտուիլ: Ընկերային փոխաւորութիւններու և անձնական կեանքի մարզին մէջ Յիսուս՝ անծանօթ և չկիրարկուած կեանքի ճամբաներ հրեւան հանեց: Պէտք է՞ որ զանոնք հաւասար ուրախութեամբ ընդունինք և նոյնիսկ աւելի մեծ փափաքով զանոնք փորձենք:

Այս սկզբունքներու ուսուցման հարցը շատ լուրջ է, քանզի ան ոչ միայն պիտի յայտնէ թէ արդեօ՞ք մենք նպատակ ըրած ենք որ այս սկզբունքները մեր ժամանակին միջոցին աշխարհը պիտի օրդեղրէ, այլ նաեւ թէ արդեօ՞ք մենք իրաւի կը փափաքի՞նք որ ապագային մէջ անոնք երբեք կիրարկուին կամ մեր զաւակներուն կողմանէ՝ գործածուին:

Օրինակով մը բացատրենք: Յիսուս սորվեցուց որ փոխադարձ սէրը ընկերային կեանքի հիմնական սկզբունքն է: Պօղոս այսպիսի սէրի մը շատ մը յատկութիւնները նկարագրեց, որոնցմէ մէկը սա է. «Սէրը չարութիւն չի խորհիր»: Այնպէս կ'երեւի թէ այս խօսքը Զաքարայ 8. 17 էն առնուած մէջբերում մ'է, եւ կը նշանակէ «դրացիիդ դէմ չարութիւն մի մտածեր»: Պէտք ենք մեր զաւակներուն սորվեցնել Զաքարիայի այս գաղափարը, զոր թէ՛ Յիսուս եւ թէ՛ Պօղոս կը պաշտպանեն, ինչպէս որ ուրիշ տեղերէն ալ գիտենք:

Այսօր մարդիկ կան որոնք բաց կերպով հակառակ դիրքը գրաւած են եւ բաց կերպով իրենց զաւակներուն Յիսուսի սկզբունքներուն հակառակ կը սորվեցնեն: Անիկայ ինծի չարութիւնը բաւ, իր բերնին չափը պիտի տամ, վըրէժս լուծելու մասին պէտք է խորհիմ, վրէժս անկէ կը լուծեմ, անոր օգուտը իրեն չեմ ցուցնիր, ահա ասոնք են անոնց կարգախօս բառերը: Վաճառականութեան մէկ մեծ մասը մրցակցութեան վըրայ հիմնուած է, որ կը նշանակէ ուրիշին շահը կողոպտել, անոր յաջողութիւնը նուազեցնել զայն ինծի սեպհականացընել:

Եթէ մանուկ մը չարութիւն չընել չի սորվիր, ի՞նչ խորհիլ պիտի սորվի. անիկայ բնական կերպով ուրիշներուն քսակէն շահիլ պիտի խորհի: Այս ընելով կրնայ զովեստի արժանանալ իբր ճարպիկ եւ սրամիտ մէկը, իբր ուստունայի պէս խելացի մանուկ մը: Ինքիւրմէն դատելով անիկայ պիտի խորհի թէ այս մտայնութիւնը ամէն մէկուն համար ալ շիտակ է: Ուրիշներուն բոլոր արարքներուն եւ խօսքերուն մէջ անձնատիրական եւ կամ ցած շարժառիթներ պիտի տեսնէ, եւ ասիկայ իր մտքին մէկ սովորութիւնը պիտի ըլլայ: Ահա այսպէս փոխադարձ անվստահութեան ընդհա-

նուր վիճակ մը յառաջ պիտի գայ: Ամէն մէկը ուրիշ ամէն մարդու մասին պիտի կասկածի. ամէն մէկը քննադատողի մը դիրքը պիտի ունենայ ամէն արարքի հանդէպ, եւ զոնէ ծածկաբար ատոր մասին աննպաստ վճիռ մը պիտի տայ յանցանքի առաջին ենթադրեալ նշանին վրայ:

Իրականութիւն մըն է որ այսօր մեզմէ շատերուն մէջ այս կասկածող եւ քննադատող մտայնութիւնը գոյութիւն ունի: Մենք զայն կը գտնենք տունիւրու մէջ, ընկերութեան մէջ, եկեղեցիներու մէջ, հաւատացեալներու իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ: Անիկայ չարութիւն խորհելէ կը ծագի: Մէքը չարութիւն չի մտածեր: Մենք կը փափաքէ՞ք որ այս սկզբունքը մեր զաւակներուն ուսուցուի, այն աղօթքով եւ ակնկալութեամբ որ անոնք պիտի կիրարկեն զայն:

Այսպիսի ուսուցում մը յաջողցնելու մէջ մեծ ազդակ մըն է անոր կիրարկումին օրինակները, զոր աշակերտները իրենց առջեւ իրենց ծնողներուն եւ ուսուցիչներուն կեանքին մէջ կը տեսնեն: Ահա հոս է ուր մեզմէ շատերը կրնան իրենց մեծագոյն ծառայութիւնը մատուցանել: Պօղոս կ'ըսէ. «Ինչ որ . . . օրով, ինչ որ բարի համբաւով է, ինչ առաքինութիւն եւ ինչ զովութիւն որ կայ, այն բաները խորհեցէք»: Փիլպ. 4. 8: Այսպիսի մտածումները չար խորհուրդներ կ'արտաքսեն եւ անոնց տեղը կը զըրաւեն: Եթէ մենք կ'ուզենք որ մեր զաւակներուն սորվեցնենք Յիսուսի սկզբունքները, մեր այս անկեղծ փափաքը զպրօցներուն ցուցնենք՝ այս ուսուցումը պահանջելով եւ մեր կեանքերուն մէջ զանիկայ հաստատելով:

ՏՐ. Ճ. Է. Մէրի

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԵԼԵԻՍՈՒՏՔԻՆ ՇՈՒՐՉ

Մեր դպրոցներուն ամենափոքր հարցըն է այս, զոր լուծելու համար հոգարարձութիւնն ու տնօրէնութիւնը ամենէն շատ միտք կը յագնեցնեն, երբեմն ինքզինքնին անելի մը առջեւ գտնելու համար միայն: Այս է կարեւոր պատճառներէն մէկը, որ հոգարարձութիւնն ու տնօրէնութիւնը կ'արգիլէ զուտ կըրթական հարցերով զբաղելէ, և որ յաճախ կը մղէ զանոնք կրթական գործին վնասող գործունէութեան՝ նիւթական հասոյթ մը ապահովելու համար: Հալէպի մէջ մեր կատարած քննութեան համեմատ նախակրթարաններու մէջ աշակերտ գլուխ տարեկան մէկ օսմ. ոսկիէն մինչեւ երկու ոսկի կը ծախսուի հոգարարձութեանց կողմանէ. դպրոցներու մեծամասնութիւնը սակայն մէկ ոսկէս օսմ. ոսկիէն աւելի կը ծախսէ: Իսկ այս միջին գումարին հազիւ թէ կէսը կարելի կ'ըլլայ գանձել աշակերտներէն: Ասկէ յայտնի կ'երեւայ թէ հոգարարձութիւնները սրչափ ծանր պարտականութեան մը տակ կը գտնուին: Մեզի ծանօթ բոլոր դպրոցներուն մէջ կարգերը յաճախ պէտք եղածէն աւելի խճողուած են. երբեմն մէկ դասարանի մէջ մէկ վարժուհիի խնամքին կը յանձնուին մինչեւ 60-70 փոքրիկներ. սովորաբար դասարանները 30-40 տեղան աշակերտներ կ'ունենան, որոնց վարժուհիներն կամ վարժապետները չնչին գումարով մը, 1-5 օսմ. ոսկի ամսաթոշակով կը վարձատրուին իրենց կատարած չարաչար աշխատանքին համար: Եթէ մանկավարժական պահանջներուն համեմատ իւրաքանչիւր 20 աշակերտին համար լաւ պատրաստուած և հետեւաբար լաւ վարձատրուած ուսուցիչ մը պաշտօնի հրաւիրուէր աշակերտ գլուխ տարեկան միջին ծախքը պիտի կրկնապատկուէր անկասկած:

Դպրոցական ծախքը կատարելու համար պէտք եղած գումարները հայթայթելու կերպ մըն է կրթական տուրք գանձել հաստատութեան տէր համայնքին իւրաքանչիւր անհատէն: Ասիկայ տեսականին մէջ շատ տրամաբանական և զիւրին կերպ մըն է. և սակայն ան կ'ենթադրէ գոհողութեան ոգի և համայնքի կատարեալ գիտակցութիւն իւրաքանչիւր անհատի մէջ: Այն որ զըպրոցին մէջ զաւակ չունի պիտի դժուարի տալու և յաճախ պիտի մերժէ, իսկ շատերը իրենք զիրենք կատարելապէս անկարող պիտի ներկայացնեն վճարելու թէ՛ հոգեւոր և թէ՛ կրթական տուրքը, որով մէկը կամ միւսը պիտի տուժէ, և թէ շատ դիւրութեամբ մտկարոյժ դասուկարգ մը յառաջ պիտի գայ ժողովուրդին մէջ:

Երկրորդ կերպ մըն է հաստատուն տեսական հասոյթի աղբիւրներ գոյացնել կրթական հիմնադրամներու և անշարժ կալուածներու միջոցաւ: Ասիկայ ամենագործական և ապահով կերպ մը կրնայ ըլլալ եթէ իմաստուն և ժիր ձեռքերով կիրարկուի ան: Ասոր մեծագոյն վտանգն է ժողովուրդը ոչ հետաքրքիր և մտկարոյժ վիճակի մը ենթարկել: Բայց փառք Աստուծոյ Սուրիոյ մէջ այս վտանգէ ազատ ենք ներկայիս, երբ սեպհական դպրոցի շէնքերէ և բնակավայրերէ իսկ զուրկ կը գտնուինք: Բայց ժողովուրդը տակաւ առ տակաւ իր գաղթականի հանգամանքը կորսնցնելով կը հաստատուի իր իսկ սեպհական շէնքերուն մէջ. և այս հաստատութեան շրջանին միջոցին կարելի է դպրոցներն ալ նկատի առնել: Իսկ ամէն համայնք իր կարողութեան սահմանին մէջ կրնայ ֆոնտի մը կազմութեան աշխատիլ, որուն արգիւնքը կրնայ մօտիկ ապագային մէջ վայելիլ:

Երրորդ կերպն է, դպրոց յաճախող աշակերտութենէն տարեթոշակի ձեռով գանձել դպրոցին համար պէտք եղած գումարը: Այս է ներկայիս միակ ընդհանրացած ձեւը: Բայց տեսանք արդէն թէ աշակերտութեան ըրած վճարումներով անկարելի է դպրոց մը պահել: Ուստի մեր դպրոցները միշտ ստիպողակաւ նութեան տակ կը գտնուին զանազան տեղեր օգնութեան կոչներ ուղղելու, կարելի է յիշուած կերպերէն մէկէն աւելին միեւնոյն ատեն գործածել տեղական պայմաններուն համեմատ: Բայց որ կերպն ալ գործածուի աշակերտութիւնը ուղղակի կամ անուղղակի կերպով պէտք է մասնակցի դպրոցական ծախքերուն: Եւ հոս է ահա վէճի առարկայ բուն խնդիրը:

Ծնողներու քով ընդհանուր միտում մըն է չուկայիկ սակարկութեամբ նուազագոյն չափով թոշակ վճարել: Իսկ կայ դասակարգ մը որ ամէն տեղ իր բացարձակ անկարողութեան յանկերգը կը կրկնէ միշտ ձրիօրէն օգտուելու համար հանրային հաստատութիւններէն: Բայց զարմանքով կը տեսնես որ իրենց երկրորդական պէտքերուն համար կոկիկ գումարներ կը ծախսեն հանդարտ խղճով: Պէտք է ընդունիլ սակայն թէ անդին կը մնայ իրաւագրկուած դասակարգ մը որուն մէկ մասը իր կարողութեան լման չափով կամ նոյնիսկ ատկէ աւելի կը վճարէ անձայն, իսկ միւս մասը իր իրական անկարողութիւնը չզիջանելով ցուցադրել չի կրնար օգտուիլ հանրային դիւրութիւններէն: Ասիկա բարոյական ողբալի կացութիւն մըն է, որ անմիջական դարմանումի պէտքն ունի: Հոս կ'ուզենք պաշտօնական մարմիններու նկատողութեան յանձնել հետեւեալ կէտերը:—

1. Իրաքանչիւր աշակերտէ անպայման, առանց բացառութեան պահանջել

գումար մը իր կարողութեան սահմանին մէջ: Ամենաաղքատն իսկ կրնայ, ըլլայ շատ փոքր, գումար մը վճարել: Նոյն իսկ եկեղեցիէն կամ ուրիշ աղբիւրներէն նպաստ ստացող ընտանիքներ պէտք է սիրով վճարեն տարեկան պըգտիկ գումար մը: Այլիկայ անհրաժեշտ է ձրիավարութեան, ձրիակերութեան քրոնիկ դարձած ախտը դարմանելու և ծնողներու և աշակերտներու մէջ ինքնապահ ըլլալու պատուաւոր զգացումը ներարկելու համար:

2. Պաշտօնական մարմինները պէտք են կարելի ամէն միջոց գործածել ունեւոր դասակարգէն մեր կարողութենէն ոչ-պակաս գումար ստանալու համար: Մեր ժողովուրդը պէտք է նկատէ թէ կրթութիւնը վաճառքի ապրանք մը չէ, զոր ներելի է արեւելեան աններելի սակարկութեան մեթոտով նուազագոյն վըճարու մով գնել:

3. Բայց պէտք է դիտել թէ եկեղեցիներն ու դպրոցները, որոշ չափով մը պատասխանատու են այս վիճակին: Կըրօնական աժան փրփականտի այս երկրին մէջ ցաւալի է տեսնել թէ աղքատութիւնը չարաչար կը շահագործուի նոր հետեւորդներ շահելու համար: Ոչ նուազ ցաւով դիտելի է որ դպրոցները իրարու հետ կը մրցին աւելի թիւով աշակերտներ հրապուրելու, ոչ թէ ճիշդ դպրոց չյաճախող դասակարգէն այլ շատ անգամ ուրիշ դպրոց յաճախողներէն: Դպրոցները և զանոնք պահող համայնքներն ու ընկերութիւնները եթէ կ'ուզեն բարձր բարոյական մը յառաջ բերել ծընողներու և աշակերտութեան մէջ և ոչ թէ սպաննել զայն, պէտք են անմիջական հասկցողութեան գալ այս վիճակին գոյութեան վերջ մը տալու համար:

ԴՊՐՈՑԱՍԷՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ
Ա.

Խիստ լուրջ և ընդարձակ նիւթ է մանուկներու կրօնական դաստիարակութիւնը: Յաճախ հարց կը ծագի թէ լճրբ և ի՞նչպէս սկսելու է ան: Այդ ուղղութեամբ շատ մը փնտռողներ կան ու մանրագնին ուսումնասիրութիւններ. բայց քիչ անգամ կը փորձուի ուղղակի մանկան մօտենալ որպէսզի ա՛ն պատասխանէ մեզի:

Որոշ է թէ մանուկը ծնանելէն առաջ սնանիլ կ'ըսկսի: Բոլոր մանկավարժներն ու հոգեբաններ կը հաստատեն թէ մանուկը դեռ աշխարհ չեկած՝ իր մօր խորհուրդներն ու զգացումներն կ'ազդեն անոր վրայ: Կատկած չկայ թէ մանկան հոգին ալ սնունդի պէտք ունի միշտ՝ իր աճումին համապատասխանող և մեր կարծածէն ու եմթագրածէն աւելի կանուխ կ'սկսի այդ սննդառութիւնը:

Առաջին անգամ երբ մանուկը աստղերուն ու արեւին առջեւ կը շլանայ, լուսինը բռնելու ջանքեր կ'ընէ, փայլակէն ու կայծակէն կը դողայ, կամ հովին միջոցով իր թռուցիկները վեր կը թռցնէ, անոր մէջ մեծ յեղաշրջումներ կը կատարուին: Անհունին ու անծանօթին առջև կը փոթորկի հոգին և շատ մը խորհրդաւոր հարցեր ինքնին կը ծագին իր մէջ: Ինչպէ՞ս կարելի է անոր փնտրողութիւնը առջեւ լուռ մնալ և աննշկատ առեւ զանոնք, երբ մի գուցէ իր մէջ բռնկող երկնային կայծերը կրնան մարիլ առ յաւետ:

Եթէ մեր յիշողութիւնները պրպտենք և մեր կամ մեր շուրջիներուն մանկութեան օրերուն անդրադառնանք, շատ մը բաներ պիտի գտնենք այս ուղղութեամբ:

Ամառուան պայծառ իրիկուններէն

մէկն էր: Լուսինը փառաւոր կերպով կը ճեմէր. երկնակամարին վրայ լոյսի շողեր սրսկելով վարը: Ես ալ հրապուրուած այդ գեղեցկութիւններէն տանիք նետուեցայ քիչ մը աւելի մօտէն փնտրելու և վայելելու բնութեան այդ հրաշալիքները: Տիրան, եզրօրս պղտիկ մանչուկը ինծի կ'ընկերանար քղանցքէս կախուելով, ինչպէս միշտ: Ան շատ պղտիկ էր տակաւին, բայց երկուքս մէկտեղ լեզու մը գտած էինք զիրար շատ լաւ հասկնալու, իրարու հետ խօսելու, խնդալու և կատակելու համար, մեր մէջ եղած տարիքի տարբերութիւնը մոռնալով շատ անգամ:

Տիրան այդ իրիկուն շատ քիչ կը խօսէր սակայն, չէի գիտեր ինչո՞ւ, զժուարաւ կ'ուզէր պատասխանել հարցումներուն, կատակելու ալ տրամագիր չէր, միտքը շատ շատ զբաղած էր, հազիւ ատեն ատեն մէկ երկու հարցում կուգար չրթներուն վրայ առանց ինձմէ երկար պատասխան մը սպասելու ու դարձաւ մեծ լռութեան մէջ կ'ընկղմէր ինք: Լուսինն ու աստղեր իրենց պայծառութեամբ տմբողջ իր հոգին զբաւած էին: Իրերու խորը մխրճուած էր, ուրկէ իզուր կը նկրտէր ինքնիրենը դուրս գալ: Կարծես ամբողջ տիեզերքը իր պտըտիկ ու սահմանափակ գլխուն մէջ ամփոփել կ'ուզէր:

Յանկարծ անուշիկ լեզուին կապերը բացուեցան, խօսիլ սկսաւ և հարցումներու տարափ մը տեղաց վրաս, որոնց առջեւ շուարած մնացի: Ես ինքս ալ տիեզերքի անհունութեան և գաղտնիքներու առջեւ թէեւ խիստ փոքր կ'ըլլայի, բայց այսուհանդերձ աշխատեցայ գոհացում տալ իրեն: Վրաս անսահման վստահութիւն ունէր Տիրան և կը խորհէր թէ իր բոլոր հարցումներուն ես կըրնամ պատասխանել:

— Զօրաքոյ՛րս, ըսաւ անհամբեր.

— Ի՞նչ կայ. ի՞նչ ունիս, տղաս.

—Այդ ճրագները որ հոտ վերը կը վառին, ո՞վ կախած է, ինտ՞որ վար չեն իյնար ատոնք:

—Աստուած կախեց, Տիրա՛ն, Ան որ ամէն բանի կարող է: Ան որ մեզ ամէնքըս ալ ստեղծեց, հայրիկը, մայրիկը, քեզ, զիս, եղբայրներդ, քոյրերդ, ամէնքս, ամէնքս...:

—Հապ՞ա Աստուած, Զինքը ո՞վ ըրաւ:

—Ինք կար արդէն:

—Հապ՞ա անկէ առաջ:

—Անկէ առաջ ալ ինքն էր:

—Հապ՞ա պինդ առաջ:

—Պինդ, պինդ առաջ ալ Աստուած կար:

—Հապ՞ա պինդ, պինդ, պինդ, պինդ առաջ...:

Տիրան այդ իրիկուն բոլորովին փոխուած էր, ա՛լ կարծես ամէն օրուան պղտիկ տղան չէր, հապա մեծ մեծ հարցերով կ'ուզէր զբաղիլ, այնպէս բաներու ձեռնարկած էր որ դիւրին չէր պատասխանել իրեն: Ան քանիցս կը կըրկնէր նոյն հարցումները, կը խնդրէր, չը պաղատէր որ բացատրեմ, ճշմարտութիւնը ըսեմ, պատասխան տամ իրեն. նոյնիսկ կ'սպառնար ըսելով, «Զպիտի թողում որ քնանաս մինչեւ որ ըսես ինծի թէ ո՞վ ըրաւ Աստուած»:

Անկէ ետքը ես շատ կրօնի դասեր տուած եմ և շատ մը ժողովներու առաջնորդած, բայց երբէք ունեցած չեմ նոյն օրուան սարսուռն ու դողը, անմեղ և նորաբողբոջ հոգիի մը առջեւ գանկելով ինքզինքս, որ գիտեալ, գիտեալ կ'ուզէր, բովանդակ ճշմարտութիւնը:

*
*
*.

Ո՛չ մէկ վարժապետ ու վարժապետ այնքան կարող է կրօնք դնել մանկան հոգիին մէջ որքան մայր մը իր գաւկին մատղա՛շ շրջանին:

Աբ. Գրոց մէջ ասոր ցայտուն օրինակներ չեն պակսիր: Սամուէլ մեծ քահանայապետը և մարգարէն ծնանե-

լէն առաջ Աստուծոյ նուիրուած էր: Դեռ շատ կանուխէն տաճարին մէջ լըսեց Աստուծոյ Զայնը զոր չէր ճանչնար և որուն պատասխանեց. «Ոսո՛ւ, Տէ՛ր, քանզի քու ծառագ մտիկ կ'ընէ»:

Մովսէս իր մօրը ծննդեցուն վրայ սորվեցաւ աստուածաշտութիւնը և այդ ուժին միջոցաւ փարաւոններու տան պալատական վայելքներու փորձութիւններու դէմ անդրդուելի մնաց և Տէրը խօսեցաւ իրեն հետ դէմ առ դէմ, ինչպէս որ մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի:

Քրիստոնեայ աշխարհ երախտապարտ է Մարիամին որ Յիսուսը իր բազուկներուն մէջ մեծցուց:

Հրեայ մայրեր Յս. ի կը տանէին իրենց գաւակները, հակառակ աշակերտներու արգելքին, որ վարդապետը ձեռք դնէ անոնց վրայ և օրհնէ զանոնք:

Պատկեր մը կայ որ տարիներէ ի վեր մտքիս վրայէն աւրուած չէ դեռ: Կոընթոս էինք, ուր Օգոստոսի մէջ սոսկալի տաք կ'ընէր: Կէսօրէն վերջ երկու երեք ժամ խանութները կը գոցուէին անպայման: Մարդիկ բոլորն ալ տուն կը քաշուէին: Պատուհաններուն փեղկերը փակուած, իւրաքանչիւրը թմրած կ'իյնար անկիւն մը: Գրեթէ բայելով կ'անցունէին ամէնքը այդ ժամանակամիջոցը: Փողոցները դատարկ, ոչ մարդ կար և ոչ ալ անասուն: Հազիւ երբեմն երբեմն մէկ երկու շուներ կը տեսնուէին որ լեզուներն դուրս ձգած, հեւալէն, իրենց թուլցած մարմիններն ետեւնուն քաշկուտելով կ'անցնէին: Իրիկուան մօտ, սակայն, ժողովուրդը ծովեզերքը կը խռնուէր ցորեկուան հեղձուցիչ թմրութիւնէն սթափելու համար, տաքէն թոշնած ծաղիկներու պէս որ յանկարծ իրենց վրայ սրսկուած ջուրի կաթիլներէն զլուխնին վեր կ'առնէին:

Ամառուան այդ տաք օրերէն մէկն էր երբ իրիկուան դէմ մենք ալ ծովեզը

իջանք: Ծովը հանդարտ էր, ջուրերը կը խայտալին արևիւն ճառագայթներուն տակ, ու կապոյտ երկինքը կը խաղար ջուրերուն վրայ: Դիւթիչ էր տեսարանը: Բայց նոյն ատեն փոթորիկ մը յուզեց ծովը, ալիքները իրարու վրայ բարձրացան, վերջապէս մօտ, կարմիր վարդի պէս բացուած հորիզոնին վրայ մութ ամպեր հաւաքուեցան: Այդ ալ նուազ խորհրդաւոր և առինքնող պատկեր մը չէր, եթէ աւելի միսթիք և վսեմ տեսարան մը չպարզուէր մեր առջև: Եօթը, ութը տարեկան զուարթ ու չէնչող երեք պզտիկներ էին. որ կուզային իրարու հետ վազելով: Ծովափ հասան և լողանք առնելու կը պատրաստուէին անոնք այն պահուն, երբ բազմութիւնը տուն կը վերադառնար և մեծերն անգամ փոթորիկին պատճառաւ չէին համարձակիր-ծով մտնել: Անոնցմէ մէկը, լուռ, կանգ առաւ պահ մը ու աչքերը երկինք վերցնելէ ու աջ ձեռքը ճակատին տանելով, երեսը խաչակնքիւլէ հեք, ալիքներուն մէջ մխրճեցաւ:

Շատ չանցած հեռուն նշմարեցի կին մը որ զէպի այդ պզտիկները կը յառաջանար: Աչքերը խանդաղատանքով առլցուն, անքթիթ կը դիտէր փոթորկոտ ծովը և ալիքներուն հետ մաքառող պզտիկները: Ու երբ անոնք իրենց լողանքը լմնցուցած ցամաք կ'ելլէին, մայրը աւազին վրայ կիցած իր զաւկին մարմինը ցամքեցնելով հագուստները կը հագուեցնէր: «Ա՛հ, մայր մը» ըսինքնիրեն «որ չէ թէ միայն իր զաւկին աղօթիկ կը սորվեցնէ, հապա ետեւը կեցած՝ կը հսկէ պահապան հրեշտակի մը պէս»: Վաղը երբ տղան մեծնայ և նետուի աշխարհի ամենի ովկիանոսին վրայ, ան դարձեալ պիտի գիտնայ աղօթիկ, և կատաղի ալիքներուն զէմ հերոսաբար մտքառիլ: Իր մօր խանդակաթ և գլրգոտ սիրոյն միջոցաւ պիտի ճանչնայ այն գերագոյն և երկնային սէրը որ տի-

եզերքի և հոգիներու վարիչն է, կեանքի ու մահուան մէջ մեղմէ միշտ անբաժան: Ժընեւ ՎԱՐՍԵՆԻԿ ՊԵԿԵԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Ա.

ԱՆՈՐ ԻՄԱՍՏԸ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՄՇԱԿՆԵՐԸ

Ընդհանրապէս Կիրակնօրեայ Վարժաբանը կոչուած է Ս. Դրքի դպրոց, եկեղեցիին մէկ մասը, կամ վաղուայ եկեղեցին: Դիտակից ենք թէ ան եկեղեցիին կիսական և ամենակարեւոր մէկ մասն է ուր ամէն տեսակ կարողութիւններով օժտուած մանուկներ կը հաւաքուին՝ կեանքի էական հիւթով սնուցուելու:

Կրօնական դաստիարակութիւնը ընտանեկան յարկէն կ'սկսի արդէն, ծնողները առաջին ուսուցիչներն են, ուղղակի կամ անուղղակի անոնք միշտ կը սորվեցնեն: Ընտանիքի գործակիցն է Կիրակնօրեայ Դպրոցն ալ, ուր մանուկները կ'ուսանին Բրիստոնէական կրօնքի սէրն ու ծառայութիւնը: Ան տեղ մ'է ուր հրեշտականման մանուկները կը պատրաստուին, կեանքի պայքարին մէջ, Բրիստոնէական կրօնքը՝ իրենց առօրեայ կեանքերով արտայայտուելով ուրիշներուն սորվեցնելու համար: Ան միջոցն է տղաքը Բրիստոնի լոյսին առաջնորդելով իրենց մատղաշ միտքերուն մէջ բարեկամութեան մաքուր և գաղափարական սիրալիր սկզբունքները մշակելու: Ան նոր սերունդի վերաբերեալ, կեանքի բնական ընթացքը սորվեցնելը խոստացող եղական հաստատութիւն մըն է:

Յիշեալ հաստատութեան մէջ՝ կը սորվիս և կը սորվեցնես, կ'ստանաս և կ'սպասուես, կը հետաքրքրուիս և կը հետաքրքրես: Ան գործի դաշտ մըն է, ուր կը ծառայես բայց չես յոգնիր, կը վազես բայց չես հասնիր, կ'սկսիս բայց չես կրնար աւարտել, կը չինես բայց

չես կրնար կատարելագործել. այսու հանդերձ միշտ կը քաջալիրուիս և երբեք չեն յուսահատիր:

Չեմ գիտեր թէ որ անունը աւելի կը յարմարի անոր, և չափ ալ կարեւորութիւն չունի զայն անուանել ուէ կերպով. բայց տասնամիայն ուսուցչութեան կարճ փորձառութիւնովս սա եզրակացութեան եկած եմ թէ ան հասկցուածէն շատ աւելի կարեւոր է:

Մենք Քրիստոնեաներս պէտք է հասկնանք Կիրակնօրեայ Դպրոցի իսկական խորունկ կարեւորութիւնը, նկատենք զայն եկեղեցիին ամենակենսական ազդակը, հետաքրքրուինք և զործոն դերեր ստանցնենք: Ահաւասիկ մեծ առիթ մը որոշ գործի, և ընդարձակ դաշտ մը մշակելու համար:

Անոր նպատակն է իր անդամներուն հոգեւոր կեանքին բնական և ասիւմանական զարգացումը: Կերտել մանկանց նըկարագրները Քրիստոնէական սկզբունքներով, շինել անոնց անձնաւորութիւնները նաղափարական բարձր սկզբունքներով. առաջնորդել զանոնք, կեանքի դժուարութիւններուն արիւարար կուրծք տակով՝ քրիստոնէական բարի և օգտակար կեանք մը ապրելու իր միջավայրին մէջ: Ի ներքուստ շինել, անուցանել, զօրացնել և մեծցնել մեր նախահայրերուն սնխախա հաւատքովը՝ քան թէ անոնց մտքերը խճողել այս ու այն կաղապարեալ վարդապետութիւններով:

Այս նպատակի յաջողութեան գաղաթնակէտին հասնելու համար Կ. Դըպրոցը պէտք է իր ետին ունենայ եկեղեցին, և իր մէջ ունենայ հետեւեալ երկու բաները:

1. Կարող, հոգեբան և Քրիստոնեայ վարիչ մը:

2. Մանկավարժ, մանկապէր և քրիստոնեայ ուսուցիչներ կամ մշակներ:

Հասնատութեան բոլոր ուրիշ պաշ-

տօնեաները և զործերը այս երկուքէն կախեալ են:

Վերակացու ըլլալ կարեւոր պատասխանատուութիւն ստանձնել է: Ան բաւականաչափ հմտութիւն, փափկանկաւ տութիւն, համբերութիւն, յարատեւութիւն կը պահանջէ: Կենցաղագիտութեան մէջ հմուտ, հասկնալու համար սրամիտ, գործը գնահատող, գործաւորներու ընտրութեան մէջ ուշադիր և զանոնք միշտ քաջալիրող վեհանձն հոգի մը պէտք է ըլլայ: Վերջապէս ան պէտք է ուղղութեան և նպատակին մէջ միշտ զրական և շինիչ ըլլայ, և իր պաշտօնակիցներուն օգտակար թիւղորութիւններ և հոգեւոր ներշնչումներ տայ:

Ուսուցիչները դպրոցի հիմնաքարերն են: Անոր ծանր պատասխանատուութիւնը կամաւոր կերպով ստանձնող վեհանձն անձնաւորութիւնները՝ այս մանկապէր մշակները եղած են:

Ո՞րն է լաւագոյն Կ. Դպրոցը. յարմարագոյն ձեռով բաղմաստենակ շէնքեր ունեցողը. կամ լաւ տեղաւորուած և բաղմաթիւ հետեւողներ ունեցողը: Աստեք կրնան լաւագոյն Կ. Դպրոցը որոշող կարեւոր կէտեր ըլլալ, բայց ոչ կարեւորագոյնը:

Լաւագոյն Կ. դպրոցը այն է ուր մանկավարժ, Քրիստոնեայ և պարտաճանաչ ուսուցիչներ, սիրով տողորուած՝ կ'աշխատին ուսանողութեան նկարարագիրները կերտելու և անձնաւորութիւնները շինելու Քրիստոսի կեանքին վրայ: Ուսուցիչները՝ այս նուիրական գործը յառաջ մղելու համար բոլոր սըրտէն աշխատող հաւատքի և սիրոյ ներկայացուցիչներն են:

Եկեղեցին և Կ. Դպրոցը այս ժիր մըշակներուն կը պարտի գործի ընդհանուր յաջողութիւնը: Իսկ ուսուցիչները պէտք է ունենան՝ Մովսէսի մօզնիսականութիւնը, Սողոմոնի խոհեմութիւնը, Յովնաթանի և Դաւիթի մտերմութիւնը, Յու-

բի համբերութիւնը, Աբրահամի հաւատ-
քը, Պողոսի յարատեւութիւնը և միւր
Տէր Յիսուս Դրիստոսի կեանքը:

(Շառունակելի)

Ահարմիթ

Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ՄԱՆԿԱՆ ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Երբ մանուկ մը իր երկրորդ տարին
ոտք կոխէ, սովորաբար մայրը կ'զգայ
թէ ալ իր զօնդակ գործը վերջացած
է: Եւ անկէ ետքը հաւանաբար իր հըս-
կողովիւնը մասամբ մը կը թուլցնէ,
խորհելով որ մանկութեան սպառնացող
վտանգները անցած են և ա'լ տղան ին-
քըն իր գլխուն ձգուելով կրնայ մեծնալ:
Այս պատճառաւ, երկուքէն վեց նախա-
դպրոցական շրջանը՝ զանձառութեան
շրջան կոչուած է: Բարեբախտաբար,
նախադպրոցական մանուկը՝ անցեալի
հետ բազմատմամբ աւելի լաւ կը խը-
նամուի:

Մանկան երկուքէն վեց տարեկանի
շրջանը աճման արագ շրջաններէն մին
է. և այս անկարելի, կարճ ժամանա-
կին մէջ, բնականոն մեծցած մանուկ մը՝
պակասութիւններ վիճակի մը կրնայ ենթա-
կուիլ, եթէ խնամքէ զրկուի:

Մարմնական արագ փոփոխութիւն-
ներ մանկութեան նախադպրոցական
շրջանին մէջ պատահելուն համար, պէտք
է որ մանուկը՝ խնամող հսկողութեան
տակ ըլլայ: Գպրոցական մանուկներու
վրայ կատարուած քննութիւններ կը
յայտնեն որ խեղանդամներու շատերը
ամենավաղի կարգերուն մէջ կը գտ-
նուին: Առողջապահական Վարչութեան
տեղեկագիրներն ալ կը հաստատեն որ
մեծցած լեզուակներ և պարանոցի աշ-
տուցներ վեց կամ եօթը տարեկաններու
մէջ շատ կը գտնուին: Վլլի գեղձերուն
մեծնալը վեցէն ութը տարեկաններու
մէջ իր առաւելագոյն քանակին կը հաս-

նի: Խօսելու մէջ թերութիւնը, կամ
թոթովութիւնը վեց և եօթը տարեկան
մանուկներու մէջ շատ կը գտնուի, ինչ-
պէս նաև աղաւթի փտիլը եօթի մէջ ընդ-
հանուր է: Ուրիշ հետաքրքիրներ տե-
սած են որ աղաներու ծուռ բուսելը
երկուքէն վեց տարեկաններու և տեսողու-
թեան տկարութիւններէն շատերը չոր-
սէն եօթ տարեկաններու մէջ յաճախագէտ
են: Այս իրողութիւններուն բոլորն ալ
կը ցուցնեն որ նախադպրոցական շրջա-
նը՝ մարմնական պակասութիւններու
համար պարարտ դաշտ մըն է: Մայր
մը յաճախ դժուարաւ կրնայ հաւատալ
որ իր աղջի առողջ և բնական մանկիկը՝
գպրոց մտնելու տարիքէն, մէկէ աւելի
մարմնական պակասութիւններու են-
թարկուած է, որոնցմէ մին կամ միւսը
արգիլել կարելի էր:

Այս տեսակ պակասութեանց կանու-
թէն երեւումը, կը չեղտէ մեծ կարեւո-
րութիւնը այն բժշկական քննութեանց,
որոն ենթարկուելու է յաճախ նախա-
դպրոցական մանուկը: Այդ կերպով
ոչ մէկ մանուկ պիտի հարկադրուէր
դարմանելի տխրողութիւնով մը գպրոց
մտնել: Անողա—ուսուցչական ընկերակ-
ցութիւնը և ուրիշ միութիւններ ժրա-
ջան աշխատանք կը թափեն, գպրոց
մտնելու համար պատրաստուող մա-
նուկները հաւաքելով անոնց քննու-
թեան համար կարգադրութիւն ընելու,
որպէս զի այդ պակասութիւնները կա-
րելի եղածին չափ շտկուին՝ տղան դըպ-
րոց մտնելէ առաջ: Եթէ երբեք նախա-
դպրոցական մանուկներու ծնողքները
այս աճման և զարգացման շրջանին կա-
րեւորութիւնը կարենային հասկնալ,
ճիշդ գպրոց մտնելու առին պատահած
այս ահագին նեղութեանց պիտի չեն-
թարկուէին: Որովհետեւ կատարուած ա-
ռողջապահական հսկողութիւնը երա-
խայութեան և կոսեալ շարունակական
ընթացք մը պիտի ըլլար, որոն չորհրդ

դպրոց մտնելու պահուն տղան պակաս թերութիւններ պիտի ներկայացնէր:

Երկուքէն վեց տարիքին մէջ մանուկը առնուազն վեց ամիսը անգամ մը բըժըշկական՝ և նոյնքան յաճախ ալ տամնարուժական քննութեան ենթարկուելու է, կաթնատամները լաւ հոգացուելու են: Լաւ ստամնարոյժ մը այս պատիկ տկոտները չի քաշեր ցորձափ ստիպողականութեան տակ չի գտնուիր, որովհետեւ գիտէ որ մանուկը մասնաւորապէս ծամելու համար անոնց կը կարօտի, և որ այս տկոտներու կանխահաս կորուստէն, նոր ելլելիք երկրորդ շարքը պիտի տուժէ: Ատամնարոյժներ կ'ըսեն թէ՝ ծնօտը պէտք եղածին չափ չի դարգանար, եթէ կաթնատամները ժամանակէն առաջ հանուին, ասկէ զատ տեւական տկոտներուն համար ալ բաւականաչափ տեղ չ'ըլլար կանուխէն ելած և տեղը լինաով լիցուած փոսիկներու մէջ: Ծնած և տեղէն խախտած տկոտներ ո'չ միայն մանկան դիմագիծը կ'աւերեն, այլ կերակուրի լաւ ծամուելուն ալ կը վնասեն:

(Անգլ. թրգ.)

Ս. Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Մեր կրթական ամենակարեւոր հարցն է ուսուցիչներու պատրաստութիւնը, որ սովորյալ ամէնէն աւելի ուշագրութիւն դրաւող և նկատի առնուող հարց մը չէ եղած: Դպրոցը երեք բաներէ կը բաղկանայ. ուսանող, ուսուցիչ և ուսուցչութիւնը տաւրկաններ: Ուէ դպրոցին արժէքին չափանիշը ոչ անոր աշակերտութիւնը և ոչ ալ անոր ուսումնական ծրարագիրն է, այլ անոր ուսուցչութիւնը: Ուէ ուսուցիչ մը պէտք է ունենայ մօքոր բարոյական կեանք, մտաւորական ճշիւ պաշտօն, ուսուցանելու և կառավարելու կարողութիւն և գործի նուիրում:

Ասոնցմէ տեւէ մէկը եթէ կը պակսի կըրթական գործը անպայման կը տուժէ:

Պէտք է ամէն կերպով քաջալերել, գնահատել շնորհակալ ոգիով բոլոր կազմակերպութիւններն ու մարմինները որոնք յուսահատեցուցիչ պարագաներու տակ, յամառ ջանքերով մեր դպրոցները կը պահեն գոնէ իրենց ներկայ վիճակին մէջ, որ բազմատմամբ ասկէ տասը տարի առաջուանին հետ պարզացումի և բարեկաւուրի զգալի փոփոխութիւններ կը ցուցնէ: Բայց պէտք է ընդունիլ նաեւ թէ տակաւին անոնք հեռի են գոհացուցիչ ըլլալէ: Կը կարծենք որ ալ ժամանակը հասած է ուսուցիչներու պատրաստութեան հարցը լրջօրէն նկատի առնելու: Պատասխանատու մարմինները պէտք չէ գոհանան պարզապէս նախակրթարանէ, սեմինարիէ, կամ երկրորդական վարժարանէ մը շրջանաւարտ երիտասարդներով. այլ պէտք է աշխատին որ անոնք իրենց յիշեալ դպրոցները աւարտելէ ետքը ուսուցիչ պատրաստող դպրոցի մը մէջ մասնաւոր կրթութիւն ստանան: Ներկայիս մեզի համար կարելի միակ հաստատութիւնը, որ կըրնայ չափով մը գոհացում տալ, Աթէնքի Սփուշ ալ յիշեալն է, ուր ապագայ ուսուցիչը մէկ կամ երկու տարուան միջոցին կրնայ ուսանիլ ընդհանուր մանկավարժութիւն, մանկաբանութիւն, հոգեբանութիւն, եւայլն: Մանաւանդ կարելի է յիշեալ դպրոցին անօրէնութեան հետ հոսկեցողութեան մը գալ պէտք եղած զիւրութիւնները ապահովելու եւ ուսանելի առարկաներուն վրայ պէտք տեսնուած կարելի յաւելումները ընելու համար:

Մանկավարժական մասնաւոր կրթութիւն ստացած երիտասարդները պէտք է խոստանան թէ ուսուցչութիւնը իրր ասպարէզ ընդունած են եւ գործը չպիտի ձգեն մինչև որ պայմանագիր երկու կողմ

մերն ալ հաւանին անոր: Իսկ օրիորդները պէտք է խոստանան գոնէ երեք տարի շարունակ ծառայել զպրոցին մէջ:

Եթէ Հոգաբարձութիւնը ստիպուի մանկավարժական կրթութիւն չստացած ուժերը գործի հրաւիրելու, պէտք է անպայման զանոնք քննէ մասնաւոր մարմնի մը միջոցաւ: Պէտք է խոստովանիլ թէ ուսուցիչներ կը հրաւիրուին որոնց մը տաւորական, բարոյական, վարչական կարողութեան եւ հմտութեան մասին համոզիչ գաղափար մը չունի հոգաբարձութիւնը:

Մեր դպրոցներուն ներկայ ուսուցչութիւնը պէտք է հետաքրքրուի կրթական նորութիւններով, նոր գաղափարներով, միշտ պէտք է ջանայ իր պաշարը ճշտացնել տեւական ընթերցումով: Պէտք է յիշել սակայն թէ անիկայ շատ անգամ միայն անհատական ջանքերով կարելի չէ ընել, պաշտօնական մարմինները պէտք է իրենց կարելին ընեն ուսուցիչներուն օգնելու համար այս մարզին մէջ:

Կը խորհինք թէ Սուրիոյ Աւետ. Միութիւնը կրնայ տեւական Ուսումնական Խորհուրդ մը կազմել այս բոլոր կրթական գործը յառաջ տանելու համար, ան կրնայ ծախու առնուած գրքերով, պարբերական տետրակներով, եւ երբ միջոցները ներքին տարեկան ուսուցչական ժողովներով ուսուցչութիւնը իր պէտք եղած մակարդակին վրայ եւ կոչումին հաւատարիմ պահել:

ԻՆՉՈՒ ՊԷՏԻ Ի ՈՅԺ ՏԱԼ ԱՐԱԲԵՐԷՆԻ

Արաբերէնը պաշտօնական լեզուն է Իսլամական աշխարհին, որ իր մէջ կը բովանդակէ մօտ 250 միլիոն ժողովուրդ մը: Պարսկաստանի արեւմտեան եւ հարաւային շրջաններէն սկսեալ մինչեւ Մարքի ազլանդեան կղերքը բոլոր արաբացած երկիրներու եւ գրեթէ բոլոր սեմական ժողովուրդներու լեզուն է ան: Պաղեստինի Հրեայ բնակչութեան տա-

կաւին փոքր մէկ մասին մէջ միայն սկսած է երթողներէնի գործածումը: Եթերորդ դարէն սկսեալ արաբական շաւանքին իբր արդիւնքը Իրաքի, Միջագետքի, Սուրիոյ եւ ուրիշ երկիրներու սեմական լեզուները գաղթեցան գործածութենէ կամ աւելի ճիշդը, թիւս, իրենք եւ արաբացան՝ պատճառ դառնալով նոր տեղական բարբառներու ստեղծումին: Հին ասորերէնը (սիրեաք) եւ եղիպտական լեզուն տակաւին կը շարունակեն իրենց գոյութիւնը իբր կրօնական լեզու կարգ մը եկեղեցիներու մէջ: Սակայն բոլոր այս յիշեալ երկիրներու մօտ հարիւր միլիոնոց ժողովուրդին գրական լեզուն արաբերէն է:

Հայութեան կարեւոր մէկ զանգուածը ներկայիս կ'ապրի այս մեծաթիւ արաբախօս ժողովուրդին մէջ, որուն հետ ունենալիք իր յարաբերութիւնէն մեծապէս կախում ունի իր տպագրային վիճակը: Մեր դպրոցներու մէջ ուրախալի է տեսնել թէ տարուէ տարի աւելի տեղ կը տրուի արաբերէնի. պէտք է խոստովանիլ, սակայն, որ տակաւին կատարելապէս անգոհացուցիչ վիճակի մը մէջ կը գտնուի անոր ուսուցումը: Ամէն Հայ, մասնաւորապէս ամէն Հայ դպրոցական պէտք է սահուն կերպով խօսելու, գրելու եւ կարդալու չափ լաւ արաբերէն գիտնայ: Ինչո՞ւ:

1. Ժողովուրդներու միջեւ իրարու հանդէպ բարեացակամ ոգի մը ստեղծելու համար անհրաժեշտ է որ անոնք զիրար ճանչնան փոխադարձ յարաբերութեամբ, որուն յարմարագոյն մէկ միջոցն է լեզուն: Ուրիշներ պէտք չունին մեր լեզուն սորվելու, բայց մինք ստիպուած ենք ուրիշներու լեզուն սորվիլ: Եթէ կ'ուզենք հասկնալ այս ազնիւ ազգը եւ հասկըցուիլ անկէ, եթէ կուզինք անոր բարեկամութիւնը շահիլ, որուն այնքան պէտք ունինք, մէկ խօսքով եթէ կ'ուզենք որ մեզ օտար տարր

մը չնկատեն այս երկրին մէջ նախ պէտք է տիրանանք արաբներէն:

2. Եթէ Հայը կ'ուզէ իր ծառայութիւնը մատուցանել արաբախօս երկրին տնտեսական, կրթական, ընկերային՝ եւայլն մարզերու մէջ պէտք է այդ երկրին ընթացիկ լեզուն գիտնայ:

3. Եթէ կ'ուզէ Հայը տնտեսապէս օգտուիլ և իր ամէն տեսակ շահերը ապահովել՝ ստիպուած պէտք է արաբներէն սորվիլ:

4. Արաբներէնը պատմական, գիտական և գրական ամենաճոխ բովանդակութիւն ունեցող լեզուներէն մէկն է: Զարմանալի և ցաւալի է որ մեր Հայ մտաւորականները, զրազէտները և բանասէրները երբեք կամ շատ քիչ ջանացեր են օգտուիլ այս ճոխ գանձէն, նոյնիսկ ի սէր հայագիտութեան, լոյս ստանալու համար հայերէն լեզուի կամ մանաւանդ հայոց պատմութեան ինչ ինչ կէտերուն մէջ: Արաբներէնը կ'արժէ սորվիլ միայն իր գրական, պատմական և անցեալ գիտական արժէքին համար:

Դպրոցի հոգաբարձութեանց և տնօրէնութեանց անկ է պէտք եղածը կարգադրելու և ծրագրելու որպէսզի ամէն Հայ դպրոցական որոշ ժամանակէ մը ետքը կարող ըլլայ արաբներէնով գրել, խօսիլ և կարգալ: Բայց մէկը կրնայ առարկել իրաւացի կերպով թէ մեր դպրոցներուն խճողեալ դասացուցակը, որ կը պարտադրէ 2-3-4 լեզուներու միանգամայն ուսուցումը չի ներհր որ պահանջուած չափով տեղ տրուի ունէ լեզուի մը: Այս մեզ կ'առաջնորդէ ուղղակի լեզուական փշոտ հարցին, որուն մասին եւս մեր գիտողութիւնները կը ներկայացնենք ստորև:

ՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՍՈՐՎԵՑՆԵԼ

Մերձաւոր Արեւելքի ընդհանրապէս բոլոր դպրոցները և մասնաւորապէս Հայ վարժարանները շատ աւելի յառաջգի-

մած կ'ըլլային և աւելի արդիւնաւոր ծառայութիւն պիտի մատուցանէին եթէ այս լեզուներու մտատանջ հարցին առջեւ չգտնուէին: Այս կամ ան պատճառաւ մեր վարժարանները երկուքէն չորս լեզուներ կ'ուսուցանեն: Սուրիոյ արաբախօս իսլամներու վարժարաններուն մէջ պաշտօնական լեզուն արաբերէն է և ֆրանսերէնի բաւական մեծ կարեւորութիւն կը տրուի, իսկ արաբախօս քրիստոնեաներու շատ մը դպրոցներուն մէջ պաշտօնական լեզուն ֆրանսերէն է և բաւական լաւ տեղ կը տրուի արաբերէնի: Հայ Առաք. վարժարաններու մէջ պաշտօնական լեզուն Հայերէն է և գրեթէ հաւասար չափով տեղ կը տրուի ֆրանսերէնի և արաբերէնի: Հայ Աւետ. դպրոցներու մէջ (նկատի չառնելով ամերիկեան հոստատութիւնները) պաշտօնական լեզուն Հայերէն է և շատ քիչ տարբերութեամբ, գրեթէ հաւասար չափով տեղ կը տրուի ֆրանսերէն, արաբերէն և անգլերէն լեզուներու: Ուսանողը խաւով վարժարանի մէջ կը սորվի լաւ արաբերէն, արաբախօս քրիստոնեայ վարժարանին մէջ՝ լաւ ֆրանսերէն, Հայ Առաքելական դպրոցին մէջ՝ լաւ Հայերէն, իսկ Հայ Աւետ. դպրոցին մէջ՝ ոչ մէկ լեզուն: Պէտք է խոստովանիլ թէ Հայ վարժարաններու մէջ օտար լեզուներու ուսուցումը և ուսուցման արդիւնքը շատ հեռի է գոհացուցիչ ըլլալէ: Ինչո՞ւ այսպէս սակայն:

1. Շատ մը աշակերտներ և ըսենք նաեւ կարգ մը դպրոցներ տակաւին կը խորհին թէ Հայերը հոս հիւր են, վերջապէս օր մը, ունէ ատեն կրնան ուրիշ տեղեր գաղթել. ուստի ի՞նչ պէտք կայ այսչափ ժամանակ և ջանք թափելու, տանջուելու օտար լեզուներ սորվելու համար:

Թէ աշակերտները և թէ ուսուցչութիւնը միանգամընդմիջ պէտք է ազատին այս կորովազրկիչ մտայնութենէն:

Բոլոր գործունէութիւնը պէտք է առաջ-
նորդուի ոչ թէ գաղթականի ալ տեղա-
ցիի հայեցակիտին համեմատ:

2. Շատ մը վարժարաններու մէջ,
գրամական նեղութեան և ալ պատճառ-
ներով անգոհացուցիչ հմտութեամբ և
կարողութեամբ ուսուցիչներ պաշտօնի
կը հրաւիրուին: Աւելորդ է յիշել թէ
լեզուն լաւ գիտցող մը կրնայ գայն լաւ
ուսուցանել:

3. Մեր վարժարաններուն մէջ օտար
լեզուներու ուսուցիչները շատ անգամ
ոչ-հայեր են, որոնք անտեղեակ հայ
աշակերտներու խորհելակերպին, հոգե-
րանութեան, սովորութիւններուն և լեզ-
ուն չեն կրնար պէտք եղած արդիւնա-
ւորութեամբ գործ արտադրել: Պա-
տասխանատու մարմինները պէտք է
խորհին լաւ ֆրանսերէն, անգլերէն, ա-
րարերէն գիտցող Հայ ուսուցիչներ պատ-
րաստելու մասին, և հիմակուելն կարե-
լի կարգադրութիւնները ընել առ այդ:

4. Վերջապէս անկարելի է որ աշա-
կերտ մը կարենայ երեք կամ (եթէ պըզ-
տիկը թրքախօս է) չորս լեզուներ սորվի
միևնոյն ատեն:

Դպրոցէն ներս մեր ուսումնական ա-
մենագիտար հարցերէն մէկն է այս, որ
եթէ անլոյծ մնայ մեր դպրոցներն ու ե-
կեղեցիները մեծապէս պիտի տուժին.
ասոր արդիւնքը պիտի տեսնուի մօտիկ
ապագային մէջ: Բանգի միայն Ֆրան-
սերէն և երբեմն ալ արաբերէն սորվելու
համար մեր դաւակները վարժարաններ
կը յաճախեն, ուր մեզի օտար գաղա-
փարականներու և սովորութիւններու
մթնոլորտի մը շունչով պիտի մեծնան
իրենց կեանքին ամենաբախտորոշ տա-
րիքին մէջ:

Բայց մէկը կրնայ հարցնել թէ երբեք
պէ՞տք է 3-4 լեզուներ սորվեցնել մեր
դպրոցներուն մէջ: Հայերէնէն գատ
ունէ Հայ մը պէտք է անպատճառ սորվի
արաբերէնն ու ֆրանսերէնը, որոնցմէ

սուաշինը երկրին և երկրորդը հոգատար
կառավարութեան լեզուներն են: Իսկ
Ամերիկեան կրթական բարձր հաստա-
տութիւնները, Հայ Սքուլ, Գոլէճ կամ
Համալսարան բնական կերպով կը հրա-
պուրեն Հայ ուսանողները, ինչպէս որ
կը հրապուրեն Մերձաւոր Արեւելքի բո-
լոր ժողովուրդներու մեծ թիւով գա-
ւակները: Հայ ուսանողը իր նախնա-
կան ուսումը իր համայնքին դպրոցին
մէջ ստանալէ ետքը իր բարձր ուսումը
առնելու համար ստիպուած է արաբա-
կան, ֆրանսական կամ ամերիկեան հաս-
տատութիւնները երթալ: Ուստի դպրոցի
հոգաբարձութիւնները ստիպուած այդ
լեզուներու տեղ կուտան իրենց ծրագրին
մէջ, որով մեր դպրոցները տեսակ մը
լեզուներու վարժարան կը դառնան, և
չեն կրնար հիմնական կրթութիւն ջաւ-
րել պատիկներուն:

Նկատի առնելով 2-3 օտար լեզուներ
ու ուսուցման պէտքը և նկատի առ-
նելով ներկայ դրութեան անբաւարա-
րութիւնը դանոնք լաւ կերպով սորվեց-
նելու համար, ստորեւ կը ներկայացնենք
մեր խորհրդածութիւնները աւելի ար-
դիւնաւոր կերպով դանոնք սորվեցնելու
համար:

Այս նպատակին հասնելու համար ե-
րեք կերպեր կրնան գործածուիլ.—

Ա. Աստիճանական դրութիւն: Ման-
կապարտէզի երեք և նախապատրաստա-
կանի երկու (Հայ Աւետ. կրթական ծը-
րագրին մէջ Ա. և Բ.) դասարաններուն
մէջ միայն հայերէն լեզու սորվեցնել.
Նախակրթարանի Ա. (Հայ Աւետ. դըպ-
րոցին Գ.) դասարանին մէջ արաբերէնի
սկսիլ և կէսական ժամ տեղութեամբ
10 պահ յատկացնել, Նախակրթարանի
Բ. (Աւետ. դպրոցին մէջ Դ.) դասարա-
նին մէջ ֆրանսերէնի սկսիլ և Նախա-
կրթարանի Դ. (Աւետ. դպրոցին Զ.)
դասարանին մէջ անգլերէնի սկսիլ: Այս
դրութեամբ ուսանողը ատիթը կուսնայ

իր միտքը կեզրոնացնելու որոշ շրջանի մը միջոցին որոշ լեզուի մը վրայ և այդ մասին իր ուսումը գնելու հաստատ հիմքի մը վրայ:

Բ. Ընտրողական գրութիւն: Դպրոցին ծրագրին մէջ անփոփոխ պահել ընտրողական գրութիւնը, բայց աշակերտներուն իրաւունք տալ ընտրելու ունէ երկու լեզուներ որոնց վրայ պիտի ուղեն իրենց բարձր ջանքը թափել անոնց տիրանալու համար: Աւելի օգտակար է երկու լեզու լաւ սորվիլ քան թէ չորս լեզուները գէշ սորվիլ:

Դ. Ուրիշ կերպ մըն է լեզուական դասերէ վատ կարգ մը դասերը օտար լեզուներով աւանդել: Դրաւական դասերը, մանաւանդ բարձր կարգի դասերէ, փրանսերենով և անգլերէնով Սուրբ պատմութիւնը, աշխարհագրութիւնը, գրականութիւնը արարներէնով ըսել:

Այս երեք կերպերուն առաջնորդող սկզբունքը սա է որ ուսանողը պէտք է իր սորվիլիք լեզուն լսելու, խօսելու և անոր գրութիւնները տեսնելու բաւականաչափ առիթ ունենայ: Այսինքն ուսանողին աչքը, ականջը և լեզուն միեւնոյն ատեն պէտք է վարժուին: Այս սկզբունքը մտքի առջև ունենալով ուրիշ շատ բաներ խորհիլ և կատարել կարելի է: Եւ մեր յիշած կերպերը կը ներկայացուին ոչ թէ անոր համար որ անոնք վիճելի քննադատելի կէտեր չունին, այլ անոր համար որ ներկայ գրութենէն աւելի գոհացուցիչ ըլլալ կը կարծենք: Նոյնիսկ իթէ պատասխանատու մարմինները այս թելադրութիւններով այս խնդիրը լրջօրէն քննելու և լուծելու մղուին մեր նպատակին կարեւոր մէկ մասը իրականացած կը նկատենք:

Տ. Ճ. Խ.

ԳՊՐՈՑԱԿԱՆ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՄՆԵՐԸ

Աւանդական սովորութիւն է դարձեւ դպրոցական հանդէսներ սարքել տարին առնուազն մէկ եւ երբեմն մէկէ աւելի անգամներ, իսկ տարուան վերջը անպատճառ: Ի՞նչ է ասոնց նպատակը, յառաջ եկած արդիւնքը կը համապատասխանէ՞ր վատնուած ժամանակին եւ

ջանքին, վերջապէս ի՞նչ է անոնց դրական արժէքը:

1. Նպատակներէն սէկը կրնայ ըլլալ տարուան միջոցին դպրոցին մէջ կատարուած գործին մէկ օրինակը տալ:

2. Եւ այս կերպով դպրոցը ծանօթացնել հասարակութեան, և անոր համակրանքը չահիլ դպրոցին հանդէպ:

3. Աշակերտութիւնը զանազան առիտով գործունէութեան մղել և անոնց հոգեւոր վառ պահել:

4. Ընտանիքը և դպրոցը իրարու կապել:

5. Հոգեկան վայելք մը ճաշակել տալ հասարակութեան:

6. Կրթական պատգամ մը տալ ուսանողներուն և անոնց ծնողներուն:

Իայն մեր դպրոցական հանդէսները իրենց ներկայ ձեւովը

1. Երբեք չեն ցոլացներ տարուան միջոցին դպրոցին մէջ կատարուած գործը:

2. Հետեւաբար հասարակութիւնը իրականութեան հակառակ, թէպէտ փայլուն, սլատկեր մը կը կապմէ իր մտքին մէջ յաճախ:

3. Աշակերտները ահապին ոյժ և ժամանակ կ'սպառեն ուսումնական ահապին վնասի մը գնով:

4. Ընտանիքը և դպրոցը իրարու կապելու համար սակէ շատ աւելի յարմար միջոցներ կան:

5. Մեր հասարակութիւնը ոչ թէ շատ անգամ հոգեկան վայելք մը, այլ ճնշիչ ձանձրոյթի նոպա մը կ'ապրի իր չհասկցած լեզուներով երկար և պոռոտախօսական արտասանութիւններ մտիկ ընելով:

6. Մեր դպրոցական հանդէսներէն շատ քիչերը կրթական շինիչ պատգամ կուտան հասարակութեան:

Մեր ներկայ հանդէսներուն արդիւնքն է

1. Փայլուն երազ մը, ինքնախաբէութիւն մը, հոգաբարձութեան, ուսանողութեան և ծնողներու մէջ:

2. Կրթական ահապին վնաս մը:

Պէտք է մի անգամ ընդմիջաւ ներկայ ձեւով հանդէսներու վերջ մը տալ և նոր կերպեր գտնել վերի նպատակները իրագործելու համար: